

# Ֆեստիվալ ՀԱՅԱՍՏԱՆ

## ԳՅՈՒՄՐԻ



## ԳՅՈՒՄՐԻ

«Ֆեստիվառ» երաժշտական փառատոնի տարբերանշանը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից:

Սարյանական արտահայտիչ գույները փոխանցում են հայաստանյան վառ ամառային տրամադրությունը՝ «Ֆեստիվառ»-յան շունչը:

Այս ամառ ԿԳՄՍ նախարարությունը և Առաջին ալիքը հրավիրում են քեզ Գյումրի՝ համտեսելու տեղական արտադրանքը, այցելելու թաքնված և հայտնի անկյուններն ու վայելելու համերգային ծրագիրը:

### ԳՅՈՒՄՐԻ, ՀՈՒԼԻՍԻ 27

**12:00 -** Տեղական արտադրանքի տոնավաճառ
Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակին հարակից Աբովյան փողոցում

**12:00 -** համերգ Շիրակի մարզի արտիստների և խմբերի մասնակցությամբ Վարդանանց հրապարակին հարակից Աբովյան փողոցում

**19:30 -** Թաթա Սիմոնյան. մենահամերգ
Նվագակցում է Կարեն Սևակ բենդը

# ՈՒ՞Ր ԳՆԱԼ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՅՐԵՐՈՒՄ



**Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում (Ձիթողցոնց տուն-թանգարան)** ներկայացված են Գյումրու մշակույթը, ճարտարապետությունը և հոգևոր ոլորտը՝ սկսած 19-րդ դարից մինչև 20-րդ դարի 20-ական թթ.: Թանգարանը եղել է հայտնի Ձիթողցյան ընտանիքի տունը: Այն բաժանված է երկու մասի. առաջինում գյումրեցի հայտնի գործիչների նկարներ են, Ձիթողցյանների կահույքը, տեղացի նկարիչների գործեր, ձեռագործ գորգեր, երկրորդում՝ Գյումրու հին նկարները և Ալեքսանդրապոլի հին քարտեզը:

*Հասցե՝ ք. Գյումրի, Հաղթանակի պող., 47*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահում** գտնվում է նրանց գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական աշխատանքների հավաքածուն՝ մոտ 620 բնօրինակ աշխատանք: Գործում է 1987 թվականից: Թանգարանում կարող եք ինտերակտիվ կերպով ծանոթանալ քույրերի արվեստին՝ «հայտնվել նկարի ներսում», 3D կրկնօրինակների և այլ դետալների օգնությամբ լիովին պատկերացնել նկարի կառուցվածքը, փորձարկել կտավի ստեղծման նույն գործիքները՝ կտավ, վրձիններ, յուղաներկ:

*Հասցե՝ ք. Գյումրի, Աբովյան 242*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Գյումրու պատմության թանգարանը** այցելուներին ծանոթացնում է Կումայրի-Ալեքսանդրապոլ-Գյումրու պատմությանը:
1980 թ. ստեղծված թանգարանում գտնվում են Գյումրու քաղաքային կյանքի կարևոր ոլորտներին առնչվող բացառիկ ցուցանմուշներ՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող փաստաթղթեր, արհեստագործական նմուշներ, լուսանկարչական սարքերի և պատկերների հավաքածու, մշակութային նմուշներ՝ գրականություն, կերպարվեստ, թատրոն, երաժշտություն և աշուղական արվեստ:

*Հասցե՝ ք. Գյումրի, Վարդանանց 1, Կենտրոնական հրապարակ*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը** սկսել է գործել 1975 թ. հոկտեմբերից՝ ի պատիվ Վարպետի ծննդյան 100-ամյակի: Հենց այս տանն է ծնվել ու իր պատանեկությունն անցկացրել Իսահակյանը: Թանգարանում կարելի է տեսնել մեծանուն գրողի աշխատասենյակը, թոնրատունը, որտեղ ծնվել է Ավետիքը, մոր տարազը, վարպետի կոստյումը և առօրյա զանազան իրեր, որոնք ներկայացնում են Գյումրու կենցաղը:

*Հասցե՝ ք. Գյումրի, Վարպետաց 91*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Մհեր Մկրտչյանի տուն-թանգարանը** գործում է 2006 թ. դեկտեմբերի 20-ից: Թանգարանում կարելի է զգալ Ֆրունզիկի արվեստի շունչը, տեսնել մեծանուն արտիստի բեմական հագուստները, լուսանկարներ, գրքեր և անձնական իրեր: Այցելուների ամենասիրելի նմուշներն են կոմոդը՝ «Մեր մանկության տանգոն» ֆիլմից, երաժշտական գործիքը՝ «Նվագախմբի տղաները» ֆիլմից, և տակառիկը՝ «01-99» կինոնկարից: Այստեղ պահպանվել են Մհեր Մկրտչյանի ձեռքով արված ծաղրանկարներ, պատկերներ, նամակներ, փաստաթղթերի նմուշներ:

*Հասցե՝ ք. Գյումրի, Շ. Ռուսթավելու 30*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանում** պահպանվում և ցուցադրվում են գրողի անձնական իրերը, ձեռագրերը և տպագիր գործերը: Մեծ արժեք են ներկայացնում հատկապես նշանավոր արվեստագետների՝ Սերգեյ Փարաջանովի, Արա Շիրազի, Սիփան Շիրազի, Մասիս Շիրազի, Լուսիկ Ագուլեցու և այլոց՝ բանաստեղծին կամ թանգարանին նվիրաբերված աշխատանքները: Հուշատուն-թանգարանը իր դռներն այցելուների համար բացել է 2003 թ.:

*Հասցե՝ ք. Գյումրի, Վարպետաց 101*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Իլյուզիաների թանգարանում** համադրված են կրթությունը և ժամանցը, զավեշտն ու զարմանքը, իրականն ու հեքիաթը, կասկածներն ու փաստերը: Տեսողական խաբկանքը, ֆիզիկայի օրենքներն ու երկրաչափական պատկերներով առաջադրանքները մարդկանց ստիպում են բացահայտել աշխարհը նորովի: Թանգարանում ցուցադրված 50 նմուշները՝ հիմնված ֆիզիկայի, մաթեմատիկայի, հոգեբանության վրա, առաջին հայացքից սովորական են թվում, բայց իրականում «կախարդական» սենյակներ են, որտեղ կարելի է զարմանալ և զվարճանալ:

*Հասցե՝ ք. Գյումրի, Շիրակացի 50 ա*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Սուրբ Յոթ Վերք** եկեղեցին (Սուրբ Աստվածածին եկեղեցի) կառուցվել է 1874-1886 թթ.: Էջմիածնի Մայր Տաճարի հետ մեկտեղ՝ այս հոգևոր կենտրոնն Արևելյան Հայաստանի այն բացառիկ եկեղեցիներից է, որը երբեք չի դադարեցրել իր գործունեությունը: Շատերը հավատում են, որ եկեղեցին պահպանվել է այնտեղ պահվող սրբապատկերի շնորհիվ, որում պատկերված է Սուրբ Մարիամն իր յոթ վերքերով: Այն գտնվում է Գյումրու Վարդանանց հրապարակում:



**Սուրբ Ամենափրկիչ** եկեղեցին կառուցվել է 1860-ականներին Անիի մայր տաճարի նմանությամբ: Եկեղեցու ճարտարապետը Թադեոս Անտիկյանն է, իսկ փայտի աշխատանքները ղեկավարել է վարպետ Մանուկ Պետրոսյանը: Խորհրդային տարիներին եկեղեցին ծառայել է որպես ֆիլհարմոնիայի դահլիճ: 1988 թ. երկրաշարժի ժամանակ եկեղեցին մասամբ ավերվել էր: Տարիներ տևած վերանորոգումից հետո այն կրկին գործում է:



**Սև բերդը** (ամրոց) կառուցվել է 1820-ականների վերջերին՝ ռուս-պարսկական պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ կայսրության հարավային սահմաններն ամրացնելու նպատակով: Սև բերդը կառուցվել է ամրոցաշինության դասական օրինակով:
Ամրոցի համար ստորգետնյա ուղիներ են կառուցվել դեպի ներկայիս Մայր Հայաստան հուշարձանը և Կարմիր բերդը: Բերդը միշտ օգտագործվել է ռազմական նշանակությամբ, սակայն երբևէ օտար հարձակումների չի ենթարկվել: Հետագայում վերանորոգվել է և օգտագործվում է որպես բազմաֆունկցիոնալ մշակութային կենտրոն:



**«Հին վարսավիրանոցը»** հիմնադրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին օրերին, իսկ կոլորիտը պահել է մինչ այսօր. այստեղ ոչինչ չի նորացվել՝ այցելուի աթոռից մինչև վարսավիրի մասին ցուցանակ: Մինչև այսօր ջուրը տաքացնում են դույլերով և ջրաեռուցիչով, իսկ վարպետները հպարտանում են իրենց սանրի կամ սափրիչի տարիքով: Մազ կտրող էլեկտրական սարքեր կան, որ արդեն 45 տարեկան են: Վարսավիրանոցը միայն տղամարդկանց համար է: Այն մշտապես զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում է:



**«Վառեմ-մարեմ»** արվեստանոցը հիմնադրվել է 2021 թ., գտնվում է «Մեր մանկության տանգոն» ֆիլմից հայտնի պատշգամբի դիմաց: Այստեղ անցկացվում են կավագործության վարպետաց դասեր, ցուցադրվում են գյումրեցի հայտնի գեղանկարիչների աշխատանքներ: «Վառեմ մարեմը» հին թաղամասին նոր շունչ է հաղորդում: Քաղաքի այցեքարտն է դարձել «Forever in Gyumri» անունների ինտերակտիվ պատը, որը համախմբել է տարբեր երկրներից ժամանած շուրջ 50.000 մարդկանց, որոնք խաչբառի սկզբունքով մեկի անվան տառից շարունակել են իրենց անունները՝ կազմելով համաշխարհային տոհմածառ:

*Հասցե՝ ք. Գյումրի, Աճեմյան 2*
*Հուլիսի 27-ին բաց է 10:00-19:30*



**Արփի լիճ ազգային պարկը** ստեղծվել է 2009 թ. Ջավախք-Շիրակ բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանության պահպանման համար: Գտնվում է Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում: Ազգային պարկը զբաղեցնում է մոտ 25 հազար հա տարածք: Այստեղ է գտնվում հայկական որորի ամենամեծ գաղութը աշխարհում և գանգրափետուր հավալուսնի միակ բնակավայրը Հայաստանում: Տարածքում կան մոտ 670 տեսակ բույսեր՝ խոլորձ, թրաշուշան, հիրիկ, կակաչ, շուշան, որոնց մի մասն էնդեմիկ են:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Երերույքի տաճարը** եռանավ բազիլիկ տիպի հայկական քրիստոնեական եկեղեցի է: Այն գտնվում է Շիրակի մարզի Անիպեմզա գյուղի մոտ՝ Ախուրյան գետի ձախ ափին: Հիմնվել է քրիստոնեության վաղ շրջանում (4-5-րդ դարերում) հեթանոսական մեհյանի տեղում: Երերույք անվանումն առաջացել է մատաղ անելու հեթանոսությունից մնացած սովորությունից: Այն կառուցված է Անիի բաց նարնջագույն տուֆից: Պահպանվել է կիսավեր վիճակում:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Հառիճավանքը** հնագույն միջնադարյան հայկական վանքերից է, գտնվում է Շիրակի մարզի Հառիճ գյուղում: Ամենահին շինությունը 7-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին է: Նրան կից կան 13-րդ դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է Զաքարե և Իվանե եղբայրների հրամանով 1201 թ.: Հուշարձանը պարուրված է նուրբ զարդաքանդակներով: Շինությունն առանձնանում է իր պարզությամբ և կառուցման կատարելությամբ: Վանքը եղել է նաև գիտական և կրթական կենտրոն:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Մարմաշենի վանական համալիրը** գտնվում է Շիրակի մարզի Մարմաշեն գյուղից 2 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Ախուրյան գետի ձախ ափին: Այն դարեր շարունակ եղել է Շիրակ գավառի հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Կառուցվել է 10-րդ դարում Վահրամ Պահլավունու օրոք, կառուցումը տևել է 41 տարի: Մարմաշենի վանքը բաղկացած է մի քանի եկեղեցուց, տնտեսական կառույցներից և օժանդակ շինություններից, որոնցից պահպանվել են հինգ եկեղեցիները և այլ կառույցներ:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ

# ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

| | | |
|---|---|---|
| **«ՉԵՐՔԵԶԻ ՁՈՐ» («ՁԿԻ ՁՈՐ»)**<br>Չերքեզի կիրճ<br>+374 99 01 15 20 | **«ԱՐԵԳԱԿ»**<br>Աբովյան 242<br>+374 98 44 10 88 | **«ԱՐԱՔՍ»**<br>Գորկու 25<br>+374 93 03 32 38 |
| **«ՅԱՂԼԻ ՀԱՈՒՍ»**<br>Ռիժկովի 6/5<br>+374 31 25 24 63<br>+374 77 09 08 34 | **«ԱՆԻ»**<br>Աբովյան 133/2<br>+374 94 09 03 09 | **«ԳԸՎՈՒԳ» ԳԱՍՏՐՈ ՏՈՒՆ**<br>Տիգրան Մեծի 11/3<br>+374 77 02 30 25 |
| **«ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»**<br>Աբովյան 246<br>+374 77 43 28 02 | **«ԱՆՈՒՇԱՐԱՆ»**<br>Սայաթ-Նովայի 1<br>+374 91 70 76 76 | **«ԻՄՊԵՐԻԱԼ»**<br>Խրիմյան Հայրիկի 2/6<br>+374 98 44 40 44 |
| **«ԲՈՒՅՍ ԵՎ ՄԵՂՐ»**<br>Ռիժկովի 5<br>+374 93 64 46 45 | **«ՇԻՐԱԶ»**<br>Գայի 1<br>+374 43 01 02 00 | **«ZERO»**<br>Ռիժկովի 2<br>+374 94 95 94 95 |
| **«ԿՈՒՄԱՅՐԻ»**<br>Աբովյան 246/6<br>+374 91 43 41 21 | **«ԿՈՒՄԿՈՒՄԱ»**<br>Գարեգին Նժդեհի 26/10<br>+374 93 36 34 44 | **«ԶԵՄԼՅԱՆԿԱ»**<br>«Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում<br>+374 98 43 65 43 |
| **«ՊՈԼՈՑ ՄՈՒԿՈՒՑ»**<br>Ջիվանու 75<br>+374 31 23 45 11 | **«GGH BY CHECHIL»**<br>Ռուսթավելու 27<br>+374 41 11 14 20 | **«ՄԻԼԵՆԻՈՒՄ»**<br>Խրիմյան Հայրիկի 46<br>+374 98 15 70 60 |
| **«ՖԱՅՏՈՆ»**<br>Հաղթանակի 3<br>+374 98 10 20 10 | **«ՀԱՅԱԹ»**<br>Գորկու 50/8<br>+374 94 77 70 67 | **«ՆԱՃ ԴՎՈՐ»**<br>Շարա Տալյան 2/6<br>+374 94 98 79 72 |
| **«ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՍԿԻ»**<br>Աբովյան 218<br>+374 44 11 51 55 | **«ՆՈՒՌ»**<br>Ռիժկովի 5/6<br>+374 33 10 44 33 | **«ՀԱՅՏՍՈՒՆ»**<br>Հաղթանակի 1/1<br>+374 43 05 08 08 |
| **«ԲԱՍՏՈՒՐՄԱ» ՇՈՓ ԵՎ ԳՐԻԼ ԲԱՐ**<br>Ռուսթավելու 29/1<br>+374 77 53 51 07 | **«ԿԱՍԿԱՏԱ»**<br>Պռոշյան 77/4<br>+374 77 77 00 81 | **«ԲԼԱՆՇ»**<br>Գայի 17, 1/1<br>+374 93 07 89 26 |
| **«ՊԻՑՑԱ ՋԱԶ»**<br>Ռիժկովի 3/2<br>+374 31 25 70 77 | **«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»**<br>Տերյան 143<br>+374 77 07 45 74 | **«ԴՎԻՆ»**<br>Շիրակացու16/1<br>+374 77 89 68 65 |
| **«ՊՈՆՉԻԿ-ՄՈՆՉԻԿ»**<br>Սայաթ-Նովայի 7<br>Աբովյան 248<br>+374 98 66 55 77 | **«ԻԳԻԹ»**<br>Ալեք Մանուկյան 8<br>+374 93 95 50 59 | **«ՎԱՆԱՏՈՒՐ»**<br>Գորկու 70<br>+374 31 25 01 92 |
| **«ՏՐԵՑՑՈ»**<br>Ռիժկովի 6<br>+374 31 25 05 60 | **«ԿՏՈՐ ՄԸ»**<br>Գայի 14<br>+374 93 94 50 99 | |



# ԿԵՑԱՎԱՅՐԵՐ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

**«ՑԻՆՑ»**
Իսահակյան 122ա
+374 77 11 17 01

**«ՕԼԻՄՊ»**
Միեր Մկրտչյան 49
+374 93 43 10 59

**«ԳՅՈՒՄՐԻ»**
Գարեգին Նժդեհի 5/10
+374 98 03 94 55

**«ԱՐԱՔՍ»**
Գորկու 25
+374 93 03 32 38

**«ԲԵՌԼԻՆ ԱՐՏ»**
Հաղթանակի պողոտա 25
+374 31 25 76 59

**«ԳԱՐՈՒՆ»**
Մարմաշենի խճուղի 1
+374 99 20 28 00

**«ԳՈԼԴ»**
Մովսես Խորենացու 15
+374 44 77 55 50

**«RO METRO»**
Գյումրու կենտրոնական
հրապարակ Արագածի 2/8
+374 93 27 22 20

**«CENTRAL»**
Գործարանային 65/1
+374 77 21 16 51

**«21 ՌՈՒՄՍ» (21 ROOMS)**
Շիրազի 33
+374 33 02 10 00

**«ՎԻԼԼԱ ԿԱՐՍ»**
Աբովյան 182
(Ռուսթավելու խաչմերուկ)
+374 93 58 17 81
+374 99 46 83 57

**«SESIL»**
Ս. Համբարձումյան 26/4
+374 98 59 77 99

**«ՖԵԼԻՍԱ»**
Շիրակացու 13/10
+374 94 46 83 57

**«ԹՈՄՈՒՍ»**
Գորկու 58
+374 77 42 43 41

**«ՎԱՆԱՏՈՒՐ»**
Գորկու 70
+374 31 25 01 92

**«ԷԹՆՈ»**
Ռիժկովի 4/9
+374 98 02 84 84

**«VALE»**
Վ. Սարգսյան 30/1
+374 95 11 11 77

**«APARTMENTS HAYAT»**
Լալայան 2/22
+374 93 92 10 99

**«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»**
Գորկու 84/1
+374 31 26 37 77

**«ՎԻԿՏՈՐԻԱ ՊԼԱԶԱ»**
Աբովյան 244/1
+374 43 29 00 03

**«ՇԻՐԱԶ ՊԼԱԶԱ»**
Շահումյան 105
+374 44 70 02 00

**«CHIEF HOTEL»**
Աբովյան 248
+374 99 31 05 10

**«JAZZ HOTEL»**
Ռիժկովի 3
+374 31 24 70 77
+374 99 35 70 77

**«ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ՀՈԹԵԼ ՓԱԼԱՍ»**
Մայակովսկու 70
+374 94 46 83 57

**«ՆԱՆԵ»**
Գարեգին Նժդեհի 1/5
+374 31 25 51 51

**«ARATTA»**
Քըրք Քըրքորյան 139
+374 93 48 07 80

**«ԼԱՅՄ»**
Ալեք Մանուկյան 2/1
+374 94 862686

**«ԱՌԼԵԿԻՆՈ»**
Ազնավուրի 1
+374 31 23 53 73,
+374 91 41 87 17

**«ԻԳԻԹ»**
Ալեք Մանուկյան 8
+374 41 27 71 77

**«ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ»**
(Grand Hotel Gyumri
by Apricot Hotels)
Աբովյան 218
+374 44 35 00 11

**«ՄԱՆԻՖԵՍՏ»**
Ղարսի խճուղի 8
+374 98 11 10 60

**«ARMOON»**
Ղորղանյան 81
+374 94 96 99 65

**«ՈՍԿԵ ԲԼՈՒՐ»**
Օզանյան 16 (մանկական
երկաթուղու տարածք)
+374 31 25 81 24
+374 77 64 64 94

**«ԿՈՒՄԱ»**
Գարեգին Նժդեհի 26/10
+374 60 68 44 44

Ֆեստիվառ
ՀԱՅԱՍՏԱՆ

**ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ** «ՖԵՍՏԻՎԱՌ» զբոսաշրջային-երաժշտական փառատոնը Իջևանում մեկ հարկի տակ կհավաքի հայ և վրացի արտիստներին՝ Էրիկ Կարապետյան, Դաթո Խուջաձե և Նուցա Թոփուրիա: Հայ-վրացական համերգային ծրագիրն իրականացվում է Հայաստանի և Վրաստանի հանրային հեռուստաընկերությունների գործակցությամբ:

**ՕԳՈՍՏՈՍԻ 24-ԻՆ** ֆեստիվառյան ռիթմերը կհասնեն Եղեգնաձոր, որտեղ տեղի կունենա «Լադանիվա» խմբի համերգը:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ